ԱԿՑԻԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ

«Ռոումինգ ծառայություն պրեմիում կարգի Visa քարտապանների համար»

Պաշտոնական սահմանումներ.

Բանկ՝ իրավաբանական անձ, որը գործում է Ղազախստանի Հանրապետությունում, Բելարուսի Հանրապետությունում, Ուզբեկստանի Հանրապետությունում, Մոլդովայի Հանրապետությունում, Սերբիայի Հանրապետությունում, Վրաստանի Հանրապետությունում, Ղրղզստանի Հանրապետությունում, Հայաստանի Հանրապետությունում տրամադրված բանկային լիցենզիայի հիման վրա և ունի բանկային ծառայություններ մատուցելու բացառիկ իրավունք:

Կատարող՝ HighPass Europe OÜLLC, իրավաբանական անձի նույնականացման ծածկագիր՝ 14732451, գտնվելու վայրը՝ Vahulille tee 6/2-35, 12015 Տալլինն, Էստոնիա: Կատարողի կոնտակտային տվյալները տեղեկատվություն ստանալու համար. էլեկտրոնային փոստով՝ office@highpass.aero, հեռախոսով՝ +372 514 6527 կամ այլ եղանակով՝ սույն Կանոններին համաձայն:

Քարտապաններ՝ Visa Platinum, Visa Signature և Visa Infinite քարտապան հանդիսացող ֆիզիկական անձիք, որոնք սույն Կանոնների դրույթների համաձայն իրավունք ունեն ստանալ Ռոումինգ:

Պատվիրատու՝ «Վիզա Ինթենեյշնլ Սերվիս Ասոսիեյշն», հասցե՝ ԱՄՆ, CA 94404 – 2775, ք. Ֆոսթեր-Սիթի, Մեթրո-Սենթր զբոսուղի, 900:

Մեսենջեր՝ շարժական հավելված (հավելված), որը նախատեսված է ակնթարթային հաղորդագրությունների և տեսանյութերի փոխանակման համար, մասանավորապես՝ Viber, Telegram, WhatsApp:

Կազմակերպիչ՝ «ԻՆՖՈԿՈՒՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, իրավաբանական անձի նույնականացման ծածկագիր՝ 36563986, գտնվելու վայրը՝ 01023, ք. Կիև, Սպորտիվնայա հրապարակ, տուն 1Ա:

Կանոններ՝ սույն ակցիայի կանոններ:

Պրոմոծածկագիր՝ նշանների հատուկ համադրություն, որը թույլ է տալիս Քարտապանին օգտվել Ռոումինգից:

Գործողության ժամկետ՝ մինչև 15.02.2024 թ., եթե այլ ժամկետ չի առաջադրված Կազմակերպչի կողմից:

Ռոումինգ՝ 3 գիգաբայթ ծավալով ռոումինգային փաթեթ, որը գործում է աշխարհի 127 երկրում:

Չատ-բոտ՝ «VisaConcierge» չատ-բոտ, որը ներառված է Մեսենջերների մեջ և հասանելի է https://mssg.me/concierge_service հղումով:

Սույն Կանոններում առանձին բացատրություն չունեցող եզրույթները սահմանվում են Ուկրաինայի գործող օրենսդրության դրույթների համաձայն:

1. Ակցիային մասնակցելու կարգը

1.1. Ռոումինգ ստանալու նպատակով Քարտապանը պետք է

1.1.1. ունենա գործող Քարտ;
1.1.2. սեղմի «Ռոումինգ» կոճակը Չատ-բոտի մենյուում;

1.1.3. ծանոթանա սույն Կանոններին;
1.1.4. ստուգի հեռախոսային քարտի Ռոումինգի հասանելիությունը:

1.2. Սույն Կանոնները հանդիսանում են հիմնարար փաստաթուղթ Քարտապանի և Կազմակերպչի/Պատվիրատուի/Կատարողի միջև ծագող պաշտոնական հարաբերությունների համար: Քարտապանի կողմից սույն Կանոնների ակցեպտը իրականացվում է դրա կողմից սույն Կանոնների 1.1.1.-1.1.4. կետերում հիշատակված գործողությունների հաջորդական կատարմամբ: Կատարողը կարող է ունենալ Ռոումինգի տրամադրման սեփական լրացուցիչ կանոններ/պայմաններ, որոնք, սակայն, չպետք է տարբերվեն սույն Կանոններից: Քարտապանը ինքնուրույն է կայացնում նման կանոնների/պայմանների հետ համաձայնելու և այդ համաձայնությունից ծագած հետևանքների վերաբերյալ որոշումը:
1.3. Քարտապանի կողմից ակցեպտն իրականացվում է կամովին և ենթադրում է սույն Կանոնների պայմաններով Ուկրաինայի Քաղաքացիական օրենսգրքի 642 հոդվածի 2-րդ կետի համաձայն գրավոր պայմանագրի կնքում: Կանոնների մասնակի ակցեպտը անթույլատրելի է:

2. Ռոումինգի ստացման կարգը

2.1. 1.1.1. - 1.1.4 կետերում հիշատակված գործողությունները հաջողությամբ կատարելուց հետո (եթե Ռոումինգը հասանելի է) Քարտապանին տրամադրվում է Պրոմոծածկագիր՝ սույն Կանոններով նախատեսված սահմանափակումների համաձայն:

2.2. Ռոումինգի սահմանափակումները քարտի տեսակի համաձայն՝ դրանց գործողության ժամկետի ընթացքում:

Քարտի տեսակը	Պրոմոծածկագրերի քանակը
Visa Platinum	1 (մեկ)
Visa Signature	2 (երկու)
Visa Infinite	3 (երեք)

2.3. Visa Signature և Visa Infinite քարտապանները կարող են գեներացնել Պրոմոծածկագիր ծառայություններից օգտվելու համար, ոչ շուտ, քան Ռոումինգի նախնական օգտագործումից 14 (տասնչորս) օրացուցային օր անց:

2.4. Չօգտագործված Ռոումինգի փոխարեն որևէ դրամական փոխհատուցում նախատեսված չէ:

3. Կողմերի պատասխանատվությունը

3.1. Քարտապանը պատասխանատվություն է կրում տրամադրված տվյալների և փաստաթղթերի համար Ուկրաինայի գործող օրենսդրության պահանջների համաձայն:

3.2. Բոլոր Բողոքները Քարտապանը պետք է ներկայացնի անմիջապես Կատարողին կամ Կազմակերպչին: Քարտապանը չի կարող Բողոք ներկայացնել Պատվիրատուին: Այսպիսի Բողոքը պետք է պատճառաբանված լինի անորակ ծառայությունների մատուցմամբ (հստակ հիմնավորմամբ) և պարունակի հստակ ապացույցներ, հակառակ դեպքում Բողոքը չի դիտարկվի: Բողոքի վերջնական դիտարկումը իրականացնում է Կատարողը, եթե այլ բան չի նշված Կազմակերպչի կողմից:

3.3. Առանց վերևում հիշատակված նախապայմանները և օրենսդրական պահանջները չկատարելու մտադրության, Կազմակերպիչը և/կամ Պատվիրատուն չեն կրում պատասխանատվություն ցանկացած գույքին կամ անձանց հասցրած որևէ վնասի, ինչպես նաև ծառայությունների՝ Քարտապանի կամ երրորդ անձանց ակնկալիքներին չհամապատասխանելու համար:

3.4. Կազմակերպիչը և/կամ Պատվիրատուն պատասխանատվություն չեն կրում Ռոումինգի տրամադրման բնույթի, որակի, ծավալի և ժամկետի համար և չեն հանդիսանում Քարտապանի և

Կատարողի միջև կնքված Ռոումինգի տրամադրման պայմանագրի կողմ:

3.5. Հեռաբժշկության ծառայության ցանկացած տարր ընդունվում է Քարտապանի կողմից «ինչպես կա»՝ հաշվի առնելով դրանց արդիականությունը մատուցման ամսաթվի դրությամբ:

3.6. Հաշվի առնելով Քարտապանի կամ երրորդ անձանց կարողության փոփոխությունը՝ խորհրդատվությունները արդիական են և ցանկալի կիրառման համար՝ դրանք կազմելու և տրամադրելու ամսաթվի դրությամբ, ինչպես նաև այն ժամանակահատվածի ընթացքում, որի սահմաններում խորհրդատվության մեջ բերված խորհուրդները կիրառելի են՝ խորհրդատվության պահանջներին համապատասխան:

4. Այլ դրույթներ

4.1. Կազմակերպիչը իրավունք ունի ներգրավել երրորդ անձանց սույն Կանոնների շրջանակներում իր պարտավորվածությունների կատարման նպատակով:

4.2. Սույն Կանոնների ոչ միանշանակ մեկնաբանություն ենթադրող իրավիճակների, ցանկացած վիճելի հարցերի և/կամ Կանոններով չկարգավորվող հարցերի ծագման դեպքում, նման հարցերի լուծումը Կազմակերպիչը/Պատվիրատուն վերապահում է իրեն: Կազմակերպչի/Պատվիրատուի նմանօրինակ որոշումը վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

4.3. Կազմակերպիչը/Պատվիրատուն իրեն իրավունք է վերապահում փոփոխել կանոնները: Ընդ որում փոփոխությունների և լրացումների վերաբերյալ տեղեկատվությունը կիրականացվի չատ-բոտում տեղադրման եղանակով: Նման փոփոխություններն ու լրացումները իրավաբանական ուժ են ստանում դրանց հրապարակման պահից, եթե այլ բան նախատեսված չէ սույն Կանոնների փոփոխություններով/լրացումներով:

4.4. Հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների վճարումը իրականացնում է այն անձը, ում վրա դրված է համապատասխան պարտավորությունը Ուկրաինայի գործող օրենսդրության դրույթներով:

4.5. Կազմակերպիչը/Պատվիրատուն չի միջամտում Ռոումինգի վերաբերյալ Քարտապանի և Կատարողի միջև ծագած վեճերիին: